*Հաստատված է*
*Հայաստանի եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2023 թվականի ապրիլի 12-ի*
*թիվ 43 նիստում*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

***Approved by***
*the Scientific Council of*
*the European University of Armenia*
*April 12, 2023*
*Session N 43,*
*Rector: H. Bisharyan*

______________________
(ստորագրություն, Կ.Տ./Signature)

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՀԵՀ, Համալսարան) ուսանողական գիտական ընկերության (այսուհետ՝ ՈՒԳԸ) կարգավիճակի, կառուցվածքի, կառավարման և անդամության հետ կապված հարաբերությունները:

1.2. ՈՒԳԸ-ը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սովորողների միավորման տեսակ է՝ ուղղված նրանց գիտահետազոտական, ճանաչողական, ստեղծագործական և հոգևոր ներուժի համախմբանը և իրացմանը:

1.3. ՈՒԳԸ-ը ստեղծվում և իր գործունեությունը դադարեցնում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

1.4 ՈՒԳԸ-ն իր գործունեության ընթացքում չի կարող ծավալել կուսակցական կամ քաղաքական գործունեություն:

1.5 ՈՒԳԸ-ն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, կամավորության, իրավահավասարության և ժողովրդավարության սկզբունքների հիման վրա:

1.6 ՈՒԳԸ-ն իր գործունեությունը իրակա-

# CHARTER OF EUA STUDENT SCIENTIFIC SOCIETY

## 1. GENERAL PROVISIONS

1.1 This regulation defines the relations related to the status, structure, management and membership of the Student Scientific Society (hereafter referred to as SSS) of the European University of Armenia (hereafter referred to as EUA, University).

1.2 SSS is a type of association of students without the status of a legal entity, aimed at consolidating and realizing their research, cognitive, creative and spiritual potential.

1.3 The SSS is established and its activities are terminated by the decision of the Scientific Council of the University.

1.4 The SSS cannot carry out party or political activities during its activity.

1.5 SSS carries out its activities based on the principles of legality, voluntarism, equality and democracy.

1.6 SSS carries out its activities in

նացնում է ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոնադրությանը և Համալսարանի ներքին իրավական ակտերին համապատասխան:
1.7 ՈՒԳԸ-ը կարող է ունենալ իր անվանումը պարունակող կլոր կնիք, տարբերանշան, ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:
1.8 Սույն կանոնադրությունը և նրանում կատարված փոփոխությունները և լրացումները հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:
*1.9* ***ՈՒԳԸ-ի անվանումն է.***
ա) հայերեն լրիվ՝ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»,**
բ) հայերեն կրճատ՝ **«ՀԵՀ ՈՒԳԸ»,**
գ) ռուսերեն լրիվ՝ **"СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО ЕВРОПЕЙСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ",**
դ) ռուսերեն կրճատ՝ **"СНО ЕУА",**
ե) անգլերեն լրիվ՝ **"STUDENT SCIENTIFIC SOCIETY OF EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA",**
զ) անգլերեն կրճատ՝ **"SSS OF EUA":**
1.10. ՈՒԳԸ-ի գտնվելու վայրն է՝ ք. Երևան Դավիթ Անհաղթի 10:

## 2. ՈՒԳԸ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՈՒԳԸ-ի գործունեության հիմքում դրված են Համալսարանի առաքելությամբ պայմանավորված ***նպատակները***, որոնք միտված են նպաստել սովորողների գիտակրթական և հոգեմտավոր ներուժի համախմբանը և պահանջմունքների բավարարմանը՝ կարևորելով բարձրագույն կրթության բնագավառում անհատի կրթական որակների շարունակական զարգացումը և կատարելագործումը**.**

accordance with RA legislation, the University's charter, this charter and internal legal acts of the University.

1.7 The SSS can have a round stamp, logo, forms, and other means of personalization containing its name.

1.8 This charter and the changes and additions made to it are approved by the Scientific Council of the University.

1.9 ***The name of the SSS is:***
a) Armenian in full: **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»,**
b) Armenian abbreviation: **ՀԵՀ ՈՒԳԸ»,**
c)Russian in full: **"СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО ЕВРОПЕЙСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ",**
d) Russian abbreviation: **"СНО ЕУА",**
e) English in full: **"STUDENT SCIENTIFIC SOCIETY OF EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA",**
f) English abbreviation: **"SSS OF EUA".**
1.10 The location of SSS: 10 Davit Anhaght str., Yerevan.

## 2. GOALS AND ACTIVITY DIRECTIONS OF SSS

2.1 The activities of the SSS are based on the ***goals*** determined by the mission of the University, aimed at contributing to the consolidation of the scientific, educational and spiritual potential of students and the satisfaction of their needs, emphasizing the continuous development and improvement of individual educational qualities in the field of higher education.

*2.2* ***ՈՒԳԸ-ի գործունեության ուղղություններն են.***
ա) նպաստել Համալսարանում գիտակրթական, հետազոտական, ճանաչողական, ստեղծագործական նախաձեռնությունների իրականացմանը,
բ) ստեղծել գիտական կամուրջ Համալսարանի և այլ բուհերի համանման ուսանողական ընկերությունների միջև,
գ) բացահայտել սովորողների գիտական և հետազոտական հետաքրքրությունները և ուղղորդել դրանց առավել խորացմանը,
դ) կազմակերպել գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ, վարպետաց դասեր, կլոր սեղանն քննարկումներ և գիտահետազոտական բնույթի այլ միջոցառումներ,
ե) հրատարակել գիտահետազոտական հոդվածներ, մենագրություններ և այլ աշխատություններ, հանրայնացնել դրանց արդյունքները,
զ) պայքարել ակադեմիական ազնվության խախտումների և գրագողության դեմ:

***2.2 The activities of SSS are:***
a) to contribute to the implementation of scientific-educational, research, cognitive, creative initiatives in the University,
b) to create a scientific bridge between the University and similar student societies of other universities,
c) to identify students' scientific and research interests and direct them to their further deepening,
d) to organize conferences, seminars, master classes, round table discussions and other events of scientific research nature,
e) to publish scientific research articles, monographs and other works, publicize their results,
f) to fight against academic integrity violations and plagiarism.

## 3. ՈՒԳԸ-ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. ***ՈՒԳԸ-ի կառավարման մարմիններն են.***
ա) ՈՒԳԸ-ի խորհուրդը,
բ) ՈՒԳԸ-ի նախագահը:
3.2. ՈՒԳԸ-ի կառավարման բարձրագույն մարմինը ՈՒԳԸ-ի խորհուրդն է:
3.3. ՈՒԳԸ-ի խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով՝ յուրաքանչյուր կիսամյակում առնվազն երկու անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր:
3.4. ՈՒԳԸ-ի խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ՈՒԳԸ-ի խորհրդի անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

## 3. STRUCTURE AND MANAGEMENT OF SSS

3.1 **The management bodies of the SSS organization are:**
a) SSS Council,
b) the chairperson of SSS,
3.2 The highest governing body of the SSS is the SSS Council.
3.3 The SSS Council conducts its activities through sessions at least twice per semester. Special sessions may also be convened if necessary.
3.4 A session of the SSS Council is valid if more than half of the SSS Council members participate in it. Decisions are made by a simple majority of votes of the members present at the session.

3.5. ՈՒԳԸ-ի խորհրդի կազմում ընդգրկվում են ՈՒԳԸ-ի նախագահը, նրա տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետների ՈՒԳԸ-ների նախագահները:

*3.6 **ՈՒԳԸ-ի խորհուրդը.***

ա) որոշում է ՈՒԳԸ-ի զարգացման հիմնական ուղղությունները, կազմում և ներկայացնում դրանցից բխող օրակարգերը,

բ) ստեղծում և վերակազմակերպում է այդ օրակարգերի սպասարկմանն ուղղված ներկազմակերպական կառույցներ և կառուցվածքային միավորներ,

գ) մշակում և ընդունում է ՈՒԳԸ-ի ներքին կառուցվածքային միավորների և հանձնախմբերի աշխատակարգերը,

3.7 ՈՒԳԸ-ի կառուցվածքային սկզբնական մարմինը ֆակուլտետների ՈՒԳԸ-ն է, որը ձևավորվում է Համալսարանի ամբիոնների կողմից երաշխավորված առնվազն հինգ սովորողներից:

3.8 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահի, նրա տեղակալի և քարտուղարի թեկնածուներին ֆակուլտետի ՈՒԳԸ-ի առաջադրմամբ հաստատում է Ֆակուլտետի խորհուրդը:

3.9 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Ֆակուլտետի խորհրդի և Համալսարանի ՈՒԳԸ-ի խորհրդի անդամ:

***3.10 ՈՒԳԸ նախագահը.***

ա) համակարգում է ՈՒԳԸ-ի ընթացիկ գործունեությունը և աշխատանքների կազմակերպումը,

բ) հրավիրում և վարում է ՈՒԳԸ-ի նիստերը, ապահովում վերջինիս բնականոն աշխատանքը,

գ) Համալսարանի անունից կնքում է համագործակցության հուշագրեր և պայմանագրեր,

դ) Գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում իր տեղակալի և ՈՒԳԸ-ի քարտուղարի թեկնա-

3.5 The SSS board includes the chairperson of the SSS, his/her deputy, the secretary, the faculty chairpersons of SSS.

***3.6 The Council of SSS.***

a) determines the main directions of SSS development, compiles and presents the agendas arising from them,

b) creates and reorganizes intra-organizational structures and structural units aimed at serving these agendas,

c) develops and adopts the working procedures of the internal structural units and commissions of the SSS.

3.7 The initial structural body of the SSS is the SSS of the faculties, which is formed by at least five students guaranteed by the chairs of the University.

3.8 Candidates for the chairperson, deputy and secretary of the Faculty SSS are approved by the Faculty Council upon nomination by the Faculty SSS.

3.9 The Chairperson of the Faculty SSS is an ex-officio member of the Faculty Council and the University SSS Council.

3.10 ***The Chairperson of SSS:***

a) coordinates the current activities of SSS and the organization of works,

b) convenes and conducts the sessions of the SSS, ensures its normal work,

c) signs cooperation memoranda and contracts on behalf of the University,

d) submits the candidates for his/her deputy and secretary of the SSS to the discussion and approval of the Scientific Council,

e) submits the annual report of the activities of the SSS to the discussion and approval of the Scientific Council,

ծուներին,
ե) Գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում ՈՒԳԸ-ի գործունեության տարեկան հաշվետվությունը,
զ) ՈՒԳԸ-ի խորհրդին է ներկայացնում ՈՒԳԸ-ի ծրագրերի իրականացման հայեցակարգը և ժամանակացույցը, ներկայացնում է ՈՒԳԸ-ի զարգացման և արդիականացման վերաբերյալ առաջարկներ:
է) իրականցնում է ՈՒԳԸ-ի նպատակներից և գործառույթներից բխող այլ իրավասություններ:

3.11 ՈՒԳԸ-ի նախագահը ներկայացվում է Համալսարանի ռեկտորի կողմից և հաստատվում Համալսարանի գիտական խորհրդի կողմից՝ երեք տարի ժամկետով:

3.12 ՈՒԳԸ-ի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Համալսարանի գիտական խորհրդի անդամ:

***3.13 ՈՒԳԸ նախագահի տեղակալը.***
ա) ՈՒԳԸ-ի նախագահի ներկայացմամբ հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից,
բ) ՈՒԳԸ-ի նախագահի բացակայությամբ կատարում է նրա գործառույթները և զեկուցում ՈՒԳԸ-ի նախագահին
գ) օժանդակում է ՈՒԳԸ-ի նախագահին իր իրավասությունների իրականացման գործում, կատարում նրա հանձնարարականները:

***3.14 ՈՒԳԸ-ի քարտուղարը.***
ա) ՈՒԳԸ-ի նախագահի ներկայացմամբ հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից,
ա) ապահովում է ՈՒԳԸ-ի խորհրդի նիստի կայացման տեխնիկական ընթացքը, կազմում նիստի օրակարգը, ծանուցում անդամներին նիստի կայացված տեղի և ժամի մասին, արձանագրում նիստերը,
գ) օժանդակում է ՈՒԳԸ-ի նախագահին իր իրավասությունների իրականացման գործում, կատարում նրա հանձնարարականները:

f) presents to the SSS Council the concept and schedule of the SSS programs implementation, presents proposals for the development and modernization of the SSS,
g) implements other powers arising from the objectives and functions of the SSS.

3.11 The Chairperson of the SSS is presented by the Rector of the University and approved by the Scientific Council of the University for a term of three years.

3.12 The Chairperson of the SSS is ex-officio a member of the Scientific Council of the University.

3.13 ***The deputy chairperson of SSS:***
a) is approved by the Scientific Council of the University upon the presentation of the SSS chairperson,
b) performs his/her functions in the absence of the SSS chairperson and reports to the SSS chairperson,
c) assists the chairperson of SSS in the implementation of his/her powers, fulfills his/her instructions.

3.14 ***Secretary of SSS:***
a) is approved by the Scientific Council of the University upon the presentation of the SSS chairperson,
a) ensures the technical process of holding the meeting of the SSS Council, draws up the agenda of the meeting, notifies the members about the place and time of the meeting, records the meetings,
c) assists the chairperson of SSS in the implementation of his/her powers, fulfills the instructions.

## 4. ՈՒԳԸ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

4.1 ՈՒԳԸ-ի անդամակցությունը բաց է Համալսարանի սովորողների համար:

4.2 ՈւԳԸ-ի անդամ կարող են դառնալ գիտակրթական և հետազոտական, ակտիվություն և նախաձեռնություն դրսևորող սովորողները, որոնք ապահովում են ուսման առաջադիմության 76 տոկոս ՄՈԳ-ի շեմը:

4.3 ՈՒԳԸ-ի անդամության դադարեցման հարցը քննարկվում և որոշվում է ՈՒԳԸ-ի խորհրդում:

4.4 ՈՒԳԸ-ի անդամներն օգտվում են Համալսարանի սովորողներին վերապահված բոլոր իրավունքներից և արտոնություններից:

## 4. SSS MEMBERSHIP

4.1. Membership of the SSS is open to students of the University.

4.2. Academic and research students who demonstrate activity and initiative can become members of the SSS, who ensure the GPA threshold of 76% of the academic progress.

4.3. The issue of termination of SSS membership is discussed and decided in the SSS council.

4.4. SSS members enjoy all the rights and privileges reserved for students of the University.